ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/207

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Կաիման» ՍՊԸ և «Յունիպովեր» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Կաիման» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Գասպարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, յուղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ /26-1/13603-2020 գրությամբ «Կաիման» ՍՊԸ-ին և «Յունիպովեր» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 02.09.2020թ. թիվ Ե/40/1609-20 գրության հիման վրա, 09.09.2020թ.-ին «Կաիման» ՍՊԸ-ին և «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 09.09.2020թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/207 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 02.09.2020թ. թիվ Ե/40/1609-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար յուղերի ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ են ներկայացրել նաև «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ն և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ն: Մասնակցության հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ի և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ»

ՍՊԸ-ի ներկայացված մասնակցության հայտերում մասնակիցների գրանցման հասցեները և նշված հեռախոսահամարները համընկնում են, ինչպես նաև երկու կազմակերպության մասնակցության հայտերը ստրոագրված են նույն լիազորված անձի կողմից: Գնահատող հանձնաժողովի 25.08.2020թ. թիվ 2.2 որոշմամբ նիստը կասեցվել է և «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ին և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ին առաջարկվել է 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հիմնավորում նշված տվյալների համընկման, միևնույն լիազոր անձի, և լիազոր անձի՝ ընկերություններում զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ: Հանձնաժողովը դիտրկելով ահմանված ժամկետում «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ի և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ի կողմից ստացված պարզաբանումը, հանձնաժողովը արձանագրեց, որ «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ի և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ի տնօրենների կողմից չի ներկայացվել հիմնավորում:

Հիմնավորումը ներկայացվել է երկու կազմակերպությունների լիզորված անձի կողմից, ով ըստ իր իսկ կողմից ներկայացված պարզաբանման հանդիսանում է կազմակերպությունում գնումներով զբաղվող ներկայացուցիչ, ով մատուցում է վճարովի ծառայություն: Սակայն համաձայն լիազորագրի լիազորված անձը լիազորված է միայն ստորագրել միայն գնման ընթացակարգի հայտերը և իրավասու չէ իրականացնել այլ գործառույթներ՝ ներառյալ տրամադրել հիմնավորում: Ըստ ներկայացված պարզաբանման «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ն և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ն հանդիսանում են տարբեր կազմակերպություններ, սակայն այդ երկու կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ստացվել է «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ի էլ. հասցեից: Գնահատող հանձնաժողովի առ 27.08.2020թ. թիվ 2.3 որոշմամբ «ԿԱԻՄԱՆ» ՍՊԸ-ի և «ՅՈԻՆԻՊՈՎԵՐ» ՍՊԸ-ի մասնակցության հայտերը գնահատվել են անբավարար և մերժվել են:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Կաիման» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Կաիման» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ

/26-1/13603-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին՝ ներկայացել է հրավիրված նիստերին և ներկայացրել իր առարկությունները նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ:

4. <u>«Յունիպովեր» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.09.2020թ.-ին գրությամբ դիմել է «Յունիպովեր» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ /26-1/13603-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

5. <u>ՍՑ-LO-2020/207 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 11.08.2020թ.-ին հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Կաիման» ՍՊԸ-ն և «Յունիպովեր» ՍՊԸ-ն:

iii. «Կաիման» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ինչպես նաև «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Կաիման» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Կաիման» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Կաիման» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

iv. «Յունիպովեր» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Ինչպես նաև «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու շրջանակում՝

- թույլ չի տվել և (կամ) թույլ չի տալու գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,
- բացակայում է հրավերով սահմանված՝ «Յունիպովեր» ՍՊԸ-ին փոխկապակցված անձանց և (կամ) «Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս «Յունիպովեր» ՍՊԸ-ին պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության դեպք:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.08.2020թ.-ի նիստի թիվ 2.2-րդ արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ «Յունիպովեր» ՍՊԸ-ի և «Կաիման» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնակցության հայտերում մասնակիցների գրանցման հասցեները և նշված հեռախոսի համարները համընկնում են, ինչպես նաև երկու կազմակերպության մասնակցության հայտերը ստորագրված են նույն լիազորված անձի կողմից: Հաշվի առնելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 119 կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և առաջարկել «Յունիպովեր» ՍՊԸ-ին և «Կաիման» ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հիմնավորում նշված տվյալների համընկման, միևնույն լիազոր անձի և լիազոր անձի՝ ընկերություններում զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ: Հիմնավորումը պետք է ուղարկել Marine.Hakobyan@anpp.am էլ. հասցեին:

vi. Հանձնաժողովի 27.08.2020թ.-ի նիստի թիվ 2.3-րդ արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը, դիտարկելով «Յունիպովեր» ՍՊԸ և «Կաիման» ՍՊԸ ներկայացված պարզաբանումը, արձանագրել է, որ «Յունիպովեր» ՍՊԸ և «Կաիման» ՍՊԸ-ի տնօրենների կողմից չի ներկայացվել պարզաբանում-հիմանվորում, այլ ներկայացվել է երկու կազմակերպությունների լիազորված անձի կողմից, ով, ըստ իր իսկ կողմից ներկայացած պարզաբանման, հանդիսանում է կազմակերպությունների գնումներով զբաղվող ներկայացուցիչ, ով մատուցում է վճարովի ծառայություն: Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ լիազորագրի համաձայն լիազորված անձը լիազորված է ստորագրել միայն գնման ընթացակարգի հայտերը: Ըստ ներկայացված պարզաբանման «Յունիպովեր» ՍՊԸ-ն և «Կաիման» ՍՊԸ-ն հանդիսանում են տարբեր կազմակերպություններ, սակայն այդ երկու կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ինֆորմացվել է «Յունիպովեր» ՍՊԸ-ի էլ. հասցեի միջոցով:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, դիտարկելով «Յունիպովեր» ՍՊԸ-ի և «Կաիման» ՍՊԸ-ի ներկայացված հայտերը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 14-րդ ենթակետի և 119-րդ կետի դրույթներով, որոշել է Մասնակիցների հայտերը մերժել:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ /26-1/13603-2020 գրությամբ «Կաիման» ՍՊԸ-ին և «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 7.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի

միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 7.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 7.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում՝ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, ընդ որում, որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից յուղերի ձեռքբերման նպատակով 11.08.2020թ.-ին հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-103/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ հայտերում մասնակիցների գրանցման հասցեները և նշված հեռախոսի

համարները համընկել են, ինչպես նաև երկու կազմակերպության մասնակցության հայտերը ստորագրված են նույն լիազորված անձի կողմից: Հաշվի առնելով Կարգի 119-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է կասեցնել նիստը և առաջարկել «Յունիպովեր» ՍՊԸ-ին և «Կաիման» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հիմնավորում նշված տվյալների համընկման, միևնույն լիազոր անձի և լիազոր անձի՝ ընկերություններում զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ:

«Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի ներկայացրած պարզաբանման հիման վրա, հանձանժողովն արձանագրել է, որ «Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի տնօրենների կողմից չի ներկայացվել պարզաբանում-հիմանվորում, այլ ներկայացվել է երկու կազմակերպությունների լիազորված անձի կողմից, ով, ըստ իր իսկ կողմից ներկայացած պարզաբանման, հանդիսանում է կազմակերպությունների գնումներով զբաղվող ներկայացուցիչ, ով մատուցում է վճարովի ծառայություն: Հանձնաժողովը արձանագրել է նաև, որ լիազորագրի համաձայն լիազորված անձը լիազորված է ստորագրել միայն գնման ընթացակարգի հայտերը: Ըստ ներկայացված պարզաբանման «Կաիման» ՍՊԸ-ն և «Յունիպովեր» ՍՊԸ-ն հանդիսանում են տարբեր կազմակերպություններ, սակայն այդ երկու կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացվել է «Յունիպովեր» ՍՊԸ-ի էլ. հասցեի միջոցով:

Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի և 119-րդ կետի դրույթներով, որոշել է «Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը մերժել:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն՝ տվյալ գնման գործընթացում իրեն, սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցության բացակայության մասին:

Կարգի 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) արգելվում է սույն կարգով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը:

Կարգի 119-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմաստով՝

1) ֆիզիկական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք միևնույն ընտանիքի անդամ են, կամ վարում են ընդհանուր տնտեսություն, կամ համատեղ

ձեռնարկատիրական գործունեություն, կամ գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից.

2) ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է՝

ա. տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տնօրինող մասնակից,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ,

գ. տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող կոլեգիալ մարմնի նախագահ, անդամ,

դ. իրավաբանական անձի այնպիսի աշխատակից, որն աշխատում է գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների ընդունման հարցում որևէ էական ազդեցություն ունի.

3) ֆիզիկական անձի կարգավիճակ չունեցող մասնակիցները համարվում են փոխկապակցված, եթե՝

ա. տվյալ անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) տասը և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները,

բ. նրանցից մեկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին տիրապետող կամ օրենքով չարգելված այլ ձևով նրա որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող մասնակիցը (բաժնետերը) և (կամ) մասնակիցները (բաժնետերերը) կամ նրանց ընտանիքի անդամները (եթե մասնակիցը ֆիզիկական անձ է) իրավունք ունեն ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետել (այդ թվում՝ առուվաճառքի, հավատարմագրային կառավարման, համատեղ գործունեության պայմանագրերի, հանձնարարականի կամ այլ գործարքների հիման վրա) մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի տասը տոկոսից ավելիին կամ ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևով վերջինիս որոշումները կանխորոշելու հնարավորություն,

գ. նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ,

դ. նրանք գործել կամ գործում են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Հրավերի 2.3-րդ կետի համաձայն՝ արգելվում է սույն կետով սահմանված փոխկապակցված անձանց և (կամ) միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին (միևնույն չափաբաժնին), բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Վերոնշյալ նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) արգելվում է Կարգի 119-րդ կետով սահմանված փոխկապակցված անձանց միաժամանակյա մասնակցությունը: Նշված կետով նաև հստակ սահմանված է թե անձանց այն շրջանակը, ովքեր կարող են համարվել փոխկապակցված անձինք, և թե այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում կհաստատվի գնման ընթացակարգին (միևնույն չափաբաժնին) փոխկապակցված անձանց մասնակցության փաստը:

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ նորմերի և դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների փոխկապակցվա-

ծության (գերիշխող դիրքի չարաշահում, հակամրցակցային համաձայնություն և Կարգի 119-րդ կետով սահմանված այլ դեպքեր) վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ կետի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 119-րդ կետի դրույթներով, որոշել է կասեցնել նիստը և առաջարկել «Յունիպովեր» ՍՊԸ-ին և «Կաիման» ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հիմնավորում վերջիններիս կողմից ներկայացված մասնակցության հայտերում գրանցման հասցեների և նշված հեռախոսի համարների տվյալների համընկման, միևնույն լիազոր անձի և լիազոր անձի՝ ընկերություններում զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ:

Այն դեպքում, երբ, ինչպես վերը նշվեց Հանձնաժողովը պետք է կիրառեր Կարգի 67-րդ կետի դրույթները և մասնակիցների ներկայացրած տվյալների իսկության ստուգման համար օգտագործեր պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանար իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եվ մասնակիցների հայտերը մերժեր միայն վերջիններիս ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալների՝ իրականությանը չհամապատասխանելու փաստի որակման դեպքում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ սույն դեպքում Պատվիրատուի կողմից Կարգի 67-րդ կետի դրույթների չկիրառումը հանգեցրել է գնման գործընթացին «Կաիման» ՍՊԸ-ի և «Յունիպովեր» ՍՊԸ-ի հետագա մասնակցության անհիմն դադարեցմանը, որպիսի պարագայում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել վերջիններիս՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ /26-1/13603-2020 գրությամբ «Կաիման» ՍՊԸ-ին և «Յունիպովեր» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2020/207 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**